	Վիբրացիայի մակարդակներ, մ/վրկ ²	Միջին արժեք, մ/վրկ ²	

Կետ 8

1	0.12	0.11	0.28
2	0.10		
3	0.12		

Չափում №	Վիբրացիայի մակարդակներ և միջին արժեքներ, մ/վրկ ²		Ուղղված և համարժեք ճշգրտված արժեքների ՍԱՇ
	Վիբրացիայի մակարդակներ, մ/վրկ ²	Միջին արժեք, մ/վրկ ²	

Կետ 9

1	0.14	0.12	0.28
2	0.10		
3	0.13		

Չափում №	Վիբրացիայի մակարդակներ և միջին արժեքներ, մ/վրկ ²		Ուղղված և համարժեք ճզգրտված արժեքների ՍՍՇ
	Վիբրացիայի մակարդակներ, մ/վրկ ²	Միջին արժեք, մ/վրկ ²	
Կետ 10			
1	0.10	0.09	0.28
2	0.08		
3	0.10		

Չափումների ամփոփումը հետևյալն է՝

Փոշի՝

1. Չափման կետերում ցերեկային տարբեր ժամանակահատվածներում փոշու մոլեկուլների իրական կոնցենտրացիաները չի գերազանցել առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները: Ինչպես նշված է աղյուսակներում, փոշու մոլեկուլների հիմնական իրական կոնցենտրացիաները մոտ են կամ գերազանցում են օրական միջին առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները (և՛ ազգային, և՛ ՄՖԿ չափանիշները) N3-ից մինչև N6 կետերում: Կարևոր է նշել, որ բոլոր առավելագույն թույլատրելիները տեղակայված են մոտ գործող Ս1 մայրուղուն (բացի կետ N7-ից) և մեծապես ազդված են ճանապարհային երթևեկությունից: Մյուս կետերում (N1, N2 և N7-ից մինչև N10) փոշու մոլեկուլների իրական կոնցենտրացիաները չեն գերազանցել օրական միջին առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները:

Աղմուկ՝

2. Չափման կետերում ցերեկային տարբեր ժամանակահատվածներում իրականացված աղմուկի մակարդակի չափումների արդյունքում՝ աղմուկի համարժեք մակարդակները մոտ են կամ գերազանցում են և՛ ազգային, և՛ ՄՖԿ սահմանափակ արժեքի շեմերը (բացի N7 և N8 կետերը): N7 կետում աղմուկի համարժեք մակարդակները, չեն գերազանցում և՛ ՄՖԿ, և՛ ազգային սահմանափակ արժեքի շեմերը, որովհետև նշված

կետը տեղակայված է Մ1 մայրուղուց ավելի հեռու, քան այլ կետերը: Կետ 8-ի արդյունքները ցույց են տալիս, որ աղմուկի համարժեք մակարդակները չեն գերազանցում ազգային սահմանափակ արժեքի շեմերը: Չափման կետերում ցերեկային տարբեր ժամանակահատվածներում իրականացված աղմուկի մակարդակի չափումների արդյունքում՝ աղմուկի առավելագույն մակարդակները մոտ են սահմանափակ արժեքի շեմերին N4, N6 և N8-ից մինչև N10 կետերում: N7 կետում աղմուկի առավելագույն մակարդակները ամենացածրն են: Մյուս կետերում (N2, N3, N5) աղմուկի առավելագույն մակարդակները շատ մոտ են կամ հիմնականում գերազանցում են սահմանափակ արժեքի շեմերը:

3. Կարևոր է նշել, որ աղմուկի բոլոր առավելագույն թույլատրելի մակարդակներում հիմնականում ազդված են Երևան-Գյումրի-Բավրա Մ1 մայրուղու ինտենսիվ երթևեկությունից, այսպիսով աղմուկի մակարդակները միշտ բարձր են:

Վիբրացիա՝

Վիբրացիայի չափումների արդյունքները գտնվում են սանիտարական նորմերով սահմանված թույլատրելի մակարդակներում:

ՀՀ-ում մակերևութային ջրերի որակը վերահսկվում է ԵՄ-ի ջրային շրջանակային հրահանգի սկզբունքներին համապատասխան: Այս համակարգը սահմանված է ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի թիվ 75-Ն որոշմամբ և գործում է 2013 թ. հունվարից: Մշակվել է մակերևութային ջրերի որակի դասակարգման սխեմա, որը յուրաքանչյուր պարամետրի համար նախատեսում է 5 դաս: Այս դասերն են՝ գերազանց (I դաս), լավ (II դաս), միջին (III դաս), վատ (IV դաս) և շատ վատ (V դաս): Դասերը տարբերվում են՝ կախված մակերևութային ջրերի նախատեսված օգտագործման նպատակից:

Աղյուսակ 58. Մակերևութային ջրերի որակի դասերը կախված են ջրի օգտագործման նպատակներից

Նպատակ	Նշումներ	Դասեր				
		Դաս I, գերազանց	Դաս II, լավ	Դաս III, միջին	Դաս IV, վատ	Դաս V, շատ

						վատ
Ազգային ջրային պաշար		✓	✓	✓	✓	✓
Ջրային հոսքերի պահպանում		✓	✓	-	-	-
Էկոհամակարգեր, ձկնաբուծություն/պահպանում	Սաղմոններ	✓	✓	-	-	-
	Ծածաններ	✓	✓	✓	-	-
Ոռոգում		✓	✓	✓	✓	-
Արդյունաբերական ջրօգտագործում		✓	✓	✓	✓	✓
Էներգիայի արտադրություն		✓	✓	✓	✓	✓

Հիմնված լինելով առկա փաստաթղթավորման և իրականացած տեղամասային հետազոտությունների վրա՝ չկան ազդակիր ջրի ռեսուրսներ ծրագրի իրականացման տարածքի անմիջական հարևանությամբ: Հաշվի առնելով նախորդ նշվածը՝ ջրի որակի մոնիթորինգ կիրականացվի: Ծրագրի իրականացման տարածքում միակ ջրի ռեսուրսը Թալին բնակավայրի մոտ գտնվող ջրամբարն է, որը տեղակայված է ծրագրի տարածքից մոտավորապես 140մ հեռավորության վրա: Նմուշները կվերցվեն նշված ջրամբարից, եթե անհրաժեշտություն լինի (հիմնված լինելով Ինժեների առաջարկությունների վրա): Հետևյալ կետերը ընտրվել են պարբերական գործիքային չափումների համար, որոնք անցկացվել են **2023թ.-ի նոյեմբերի 29-ին**՝

1. Նմուշառման կետ № 8 – 40°18'20.92"N, 44° 4'32.80"E, տեղակայված է շինարարական աշխատանքների ճամբարի տարածքում:
2. Նմուշառման կետ № 9 - 40°21'8.16"N, 43°57'21.12"E, տեղակայված է Դավթաշեն բնակավայրի տարածքում (հեռավորությունը՝ մոտավորապես 180մ ամենամոտ շինությունից և 80մ փոքր խաչքարից):

Չափման կետի մոտակայքում չափումների ընթացքում գործում էին հետևյալ մեքենաները (Աղյուսակ 59)՝

Աղյուսակ 59. Տեխնիկաների այն տեսակները, որոնք աշխատել են տարածքում Առաջադրանք 2-ի չափումների ընթացքում

Կետ №	1 ^{ին} չափում	2 ^{րդ} չափում	3 ^{րդ} չափում
8	-	-	-

9	մեկ էքսկավատոր, երկու բեռնատար	-	մեկ էքսկավատոր, երկու բեռնատար
---	-----------------------------------	---	-----------------------------------

Չափման արդյունքներ և գնահատում

Չափումների ժամանակացույցը ներկայացված է ստորև՝

Կետ №	1 ^{ին} չափում	2 ^{րդ} չափում	3 ^{րդ} չափում
8	11:50	13:14	14:29
9	12:31	13:48	15:03

Աղյուսակ 60. 2023թ. նոյեմբերի 29-ին կատարված փոշու (PM2.5) չափումների արդյունքները՝ համեմատած 2023թ. նոյեմբերի 25-ին կատարված փոշու հիմնական չափումների հետ և առավելագույն թույլատրելի կոնցենտրացիան

Կետ №	PM2.5 փոշու իրական կոնցենտրացիա, մգ/մ ³					Առավելագույն թույլատրելի կոնցենտրացիա, մգ/մ ³		
						Ազգային		ՄՖԿ չափանիշ
	1 ^{ին} չափում	2 ^{րդ} չափում	3 ^{րդ} չափում	Միջին արժեք	Հիմնական արժեք (04.04.2023)	Առավելագույն արժեք	Օրական միջին	Օրական միջին
8	0.014	0.014	0.018	0.015	0.016	0.16	0.035	0.025
9	0.010	0.008	0.010	0.009	0.010			

Աղյուսակ 61. 2023թ. նոյեմբերի 29-ին կատարված փոշու (PM10) չափումների արդյունքները՝ համեմատած 2023թ. նոյեմբերի 25-ին կատարված փոշու հիմնական չափումների հետ և առավելագույն թույլատրելի կոնցենտրացիան

Կետ №	PM10 փոշու իրական կոնցենտրացիա, մգ/մ ³					Առավելագույն թույլատրելի կոնցենտրացիա, մգ/մ ³		
						Ազգային		ՄՖԿ չափանիշ
	1 ^{ին} չափում	2 ^{րդ} չափում	3 ^{րդ} չափում	Միջին արժեք	Հիմնական արժեք (04.04.2023)	Առավելա գույն արժեք	Օրական միջին	Օրական միջին
8	0.022	0.020	0.026	0.023	0.017	0.3	0.06	0.05
9	0.018	0.016	0.016	0.017	0.013			

Աղյուսակ 62. 2023թ. նոյեմբերի 29-ին կատարված աղմուկի չափումների արդյունքներ՝ համեմատած 2023թ. նոյեմբերի 25-ին կատարված փոշու հիմնական չափումների հետ և առավելագույն թույլատրելի կոնցենտրացիան

Չափում №	Աղմուկի մակարդակներ, դԲԱ				Սահմանափակ արժեքի շեմ, դԲԱ		
	Համարժեք աղմուկի մակարդակին, LAeq	Հիմնական արժեք (04.04.2023)	Առավելագույն աղմուկի մակարդակ, LAmax	Հիմնական արժեք (04.04.2023)	Ազգային		ՄՖԿ չափանիշներ գիշերային/ցերեկային ռեժիմներ
					Համարժեք աղմուկի մակարդակին	Առավելագույն աղմուկի մակարդակ	
Կետ 8							
1	52.6	53.9	60.1	64.4	55	70	45/55
2	50.2		58.4				
3	54.9		63.0				

Չափում №	Աղմուկի մակարդակներ, դԲԱ				Սահմանափակ արժեքի շեմ, դԲԱ		
	Համարժեք աղմուկի մակարդակին, LAeq	Հիմնական արժեք (04.04.2023)	Առավելագույն աղմուկի մակարդակ, LAmax	Հիմնական արժեք (04.04.2023)	Ազգային		ՄՖԿ չափանիշներ գիշերային/ցերեկային ռեժիմներ
					Համարժեք աղմուկի մակարդակին	Առավելագույն աղմուկի մակարդակ	
Կետ 9							
1	60.4	60.1	68.8	67.8	55	70	45/55
2	57.8		66.1				
3	59.8		67.9				

Աղյուսակ 63. 2023թ. նոյեմբերի 29-ին կատարված վիբրացիայի չափումների արդյունքները՝ համեմատած 2023թ. նոյեմբերի 25-ին կատարված փոշու հիմնական չափումների հետ և առավելագույն թույլատրելի կոնցենտրացիան

Չափում №	Վիբրացիայի մակարդակներ և միջին արժեքներ, մ/վրկ ²		Ուղղված և համարժեք ճշգրտված արժեքների ՍԱՇ
	Վիբրացիայի մակարդակներ, մ/վրկ ²	Հիմնական արժեք, մ/վրկ ²	
Կետ 8			
1	0.10	0.11	0.28
2	0.08		
3	0.12		

Չափում №	Վիբրացիայի մակարդակներ և միջին արժեքներ, մ/վրկ ²		Ուղղված և համարժեք ճշգրտված արժեքների ՄԱՇ
	Վիբրացիայի մակարդակներ, մ/վրկ ²	Հիմնական արժեք, մ/վրկ ²	
Կետ 9			
1	0.12	0.12	0.28
2	0.10		
3	0.11		

Եզրակացություններ՝

- Չափման կետերում ցերեկային տարբեր ժամանակահատվածներում փոշու մոլեկուլների իրական կոնցենտրացիաները չեն գերազանցում և՛ առավելագույն թույլատրելի, և՛ օրական միջին կոնցենտրացիաները: Համեմատելով հիմնական արդյունքները՝ PM10 իրական կոնցենտրացիաները մի փոքր ավելի բարձր են, քան հիմնական արժեքները: Կապալառուն հրահանգել է լուծել տվյալ խնդիրը և զեկուցել:
- Չափման կետերում ցերեկային տարբեր ժամանակահատվածներում իրականացված ադուկի մակարդակի չափումների արդյունքում՝ ադուկի համարժեք մակարդակները չեն գերազանցում սահմանափակ արժեքի շեմերը N8 կետում, բայց գերազանցում են սահմանափակ արժեքի շեմերը N9 կետում: Բոլոր կետերում ադուկի առավելագույն մակարդակները գտնվում են սանիտարական նորմերով սահմանված թույլատրելի սահմաններում: Կարևոր է նշել, որ N9 կետը տեղակայված է Մ1 մայրուղու մոտ և ազդված է ինտենսիվ երթևեկությունից:
- Վիբրացիայի չափումների արդյունքները գտնվում են սանիտարական նորմերով սահմանված թույլատրելի մակարդակներում:

2023թ. դեկտեմբերի 25-ին կատարված պարբերական գործիքային չափումների համար հետևյալ կետերն են՝

1. Նմուշառման կետ № 8 – 40°18'20.92"N, 44° 4'32.80"E, տեղակայված է շինարարական աշխատանքների ճամբարի տարածքում:

Չափման կետի մոտակայքում չափումների ընթացքում գործում էին հետևյալ տեխնիկաները (Աղյուսակ 64)՝

Աղյուսակ 64. Տեխնիկաների այն տեսակները, որոնք աշխատել են տարածքում Առաջադրանք 2-ի չափումների ընթացքում

Կետ №	1 ^{ին} չափում	2 ^{րդ} չափում	3 ^{րդ} չափում
8	-	-	-

Չափման արդյունքները և գնահատումը

Չափումների ժամանակացույցը ներկայացված է ստորև՝

Կետ №	1 ^{ին} չափում	2 ^{րդ} չափում	3 ^{րդ} չափում
8	12:35	13:14	13:47

Աղյուսակ 65. 2023թ. դեկտեմբերի 25-ին կատարված փոշու (PM2.5) չափումների արդյունքները՝ համեմատած 2023թ. նոյեմբերի 25-ին կատարված փոշու հիմնական չափումների հետ և առավելագույն թույլատրելի կոնցենտրացիան

Կետ №	PM2.5 փոշու իրական կոնցենտրացիա, մգ/մ ³					Առավելագույն թույլատրելի կոնցենտրացիա, մգ/մ ³		
						Ազգային		ՄՖԿ չափանիշ
	1 ^{ին} չափում	2 ^{րդ} չափում	3 ^{րդ} չափում	Միջին արժեք	Հիմնական արժեք (04.04.2023)	Առավելագույն արժեք	Օրական միջին	Օրական միջին
8	0.005	0.005	0.004	0.005	0.016	0.16	0.035	0.025

Աղյուսակ 66. 2023թ. դեկտեմբերի 25-ին կատարված փոշու (PM10) չափումների արդյունքները՝ համեմատած 2023թ. նոյեմբերի 25-ին կատարված փոշու հիմնական չափումների հետ և առավելագույն թույլատրելի կոնցենտրացիան

Կետ №	PM10 փոշու իրական կոնցենտրացիա, մգ/մ ³	Առավելագույն թույլատրելի կոնցենտրացիա, մգ/մ ³
----------	---	--

						Ազգային		ՄՖԿ չափանիշ
	1 ^{րդ} չափում	2 ^{րդ} չափում	3 ^{րդ} չափում	Միջին արժեք	Հիմնական արժեք (04.04.2023)	Առավելագույն արժեք	Օրական միջին	Օրական միջին
8	0.008	0.005	0.006	0.006	0.017	0.3	0.06	0.05

Աղյուսակ 67. 2023թ. դեկտեմբերի 25-ին կատարված աղմուկի չափումների արդյունքները՝ համեմատած 2023թ. նոյեմբերի 25-ին կատարված փոշու հիմնական չափումների հետ և առավելագույն թույլատրելի կոնցենտրացիան

Չափում №	Աղմուկի մակարդակներ, դԲԱ				Սահմանափակ արժեքի շեմ, դԲԱ		
	Համար ժեք աղմուկի մակարդակին, LAeq	Հիմնական արժեք (04.04.2023)	Առավելագույն աղմուկի մակարդակ, LAmax	Հիմնական արժեք (04.04.2023)	Ազգային		ՄՖԿ չափանիշներ գիշերային/ցերեկային ռեժիմներ
					Համար ժեք աղմուկի մակարդակ	Առավելագույն աղմուկի մակարդակ	
Կետ 8							
1	47.8	53.9	56.1	64.4	55	70	45/55
2	46.1		55.7				
3	48.4		57.6				

Աղյուսակ 68. 2023թ. դեկտեմբերի 25-ին կատարված վիբրացիայի չափումների արդյունքները՝ համեմատած 2023թ. նոյեմբերի 25-ին կատարված փոշու հիմնական չափումների հետ և առավելագույն թույլատրելի կոնցենտրացիան

Չափում №	Վիբրացիայի մակարդակներ և միջին արժեքներ, մ/վրկ2		Ուղղված և համարժեք ճշգրտված արժեքների ՍԱՇ
	Վիբրացիայի մակարդակներ, մ/վրկ2	Հիմնական արժեք, մ/վրկ2	
Կետ 8			
1	0.10	0.11	0.28
2	0.09		
3	0.10		

Եզրակացություններ՝

- Չափման կետերում փոշու մոլեկուլների իրական կոնցենտրացիաները ցերեկային տարբեր ժամանակահատվածներում չի գերազանցել ն՛ առավելագույն թույլատրելի, ն՛ օրական միջին կոնցենտրացիաները: Համեմատելով հիմնական արդյունքների հետ՝ փոշու իրական կոնցենտրացիաները (ն՛ PM2.5, ն՛ PM10) ավելի քիչ են, քան հիմնական արժեքները (հիմնականում ազդված եղանակային պայմաններից):
- Չափման կետերում ցերեկային տարբեր ժամանակահատվածներում իրականացած աղմուկի մակարդակի չափումների արդյունքում՝ աղմուկի համարժեք մակարդակները չեն գերազանցում սահմանափակ արժեքի շեմերը: N8 կետում աղմուկի առավելագույն մակարդակները գտնվում են սանիտարական նորմերով սահմանված թույլատրելի սահմաններում:
- Վիբրացիայի չափումների արդյունքները գտնվում են սանիտարական նորմերով սահմանված թույլատրելի սահմաններում:

3.2 Բուսահողի կառավարում

1. Առաջադրանք 1՝ Ագարակ հնագիտական համալիրը շրջանցող 8 կմ ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 29+600-կմ 37+545)

Առաջադրանք 1-ի համար հաշվետու ժամանակահատվածում բուսահող չի առաջացել: Մեկնարկի ամսաթվից սկսած պեղված բուսահողի ընդհանուր ծավալը 98000 մ3 է: Վերին շերտի բուսահողը տեղափոխվել է հաստատված ժամանակավոր աղբավայրեր: Ընդունման ակտը ստորագրվել է Աշտարակ համայնքի հետ, կապված բուսահողի քանակների հետ, Ագարակ 1-ում և Ագարակ 3-ում ներկայացվել են:

2. Առաջադրանք 2՝ 34 կմ-ի մնացած ճանապարհահատվածը (Մ-1 ճանապարհ կմ 37+545-կմ 71+500)

Առաջադրանք 2-ի համար, հաշվետու ժամանակահատվածում բուսահող չի առաջացել:

3.3 Ծինարարական աղբի կառավարում

1. Առաջադրանք 1՝ Ազարակ հնագիտական համալիրը շրջանցող 8 կմ ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 29+600-կմ 37+545)

Առաջադրանք 1-ի համար, համապատասխան պեղված նյութերը (ժայռեր, քարեր և այլն) կուտակվել են ՃՃ շրջանակներում՝ հետագա օգտագործման համար: Հետևյալ թափոնները առաջացել և կուտակվել են (ՃՃ-ի շրջանակում) հաշվետու ժամանակահատվածի ընթացքում: Ծինհրապարակում տեղադրվել է բիոզուգարան, ինչպես նաև կնքվել է պայմանագիր «Փայլ սերվիս» ՍՊԸ-ի հետ՝ բիոզուգարանների սանիտարահիգիենիկ և էպիդեմիոլոգիական պայմանների ապահովման համար: Պայմանագրի համաձայնագիրը ներկայացված է Կապալառուի բնապահպանական ամսական հաշվետվության համար 2023թ. ապրիլին:

Հաշվետու ժամանակահատվածում շինարարական կարիքների համար ոչ վտանգավոր նյութերից մոտավորապես 16 465 մ³ է առաջացել և տեղափոխվել է հաստատված թափոնների վայրեր Ազարակ 2-ում և Ազարակ 4-ում:

Ծինարարական թափոնի նվազագույն չափը առաջացել է հաշվետու ժամանակահատվածում, որը վերաօգտագործվել է աշխատանքի ընթացքում: Հաշվետու ժամանակահատվածում վտանգավոր թափոնների ոչ էական քանակ է առաջացել:

Կոշտ/կենցաղային աղբ (կույտ) հավաքվել է շինհրապարակում տեղադրված աղբամաններում՝ շինհրապարակին կից ճամբարում: Աշտարակ համայնքի համայնքային ծառայությունը շաբաթական հիմունքներով տեղափոխում է աղբը շինհրապարակից:

Հաշվետու ժամանակահատվածում առաջացած շինարարական աղբը ներկայացված է ստորև աղյուսակում՝

Աղբի տեսակ	Առաջացած թափոն (մ ³)			Դիտողություններ
	Նախորդ ընդհանուր	Հաշվետու ժամանակահատված	Նոր ընդհանուր	
2023թ. հուլիս				
Ծինարարական թափոն (ներառյալ ճանապարհաշինարարության համար անպիտան հորատված նյութեր)	85865	1836	87701	Տեղափոխվել է աղբավայրեր:

Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություն
Հայաստան. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշեր 1 և 2

Շինարարության հետ կապված թափոններ	հեռացված	0	0	0	-
	վերաօգտագործված	0	0	0	-
Վտանագավոր (ասֆալտ)	հեռացված	0	0	0	-
	վերաօգտագործված	0	0	0	-
Կուտակային թափոն		85865	1836	87701	-
2023թ. օգոստոս					
Շինարարական թափոն (ներառյալ ճանապարհաշինարարության համար անպիտան հորատված նյութեր)		87701	680	64554	Տեղափոխվել է աղբավայրեր:
Շինարարության հետ կապված թափոններ	հեռացված	0	0	0	-
	վերաօգտագործված	0	0	0	-
Վտանագավոր (ասֆալտ)	հեռացված	0	0	0	-
	վերաօգտագործված	0	0	0	-
Կուտակային թափոն		87701	680	88381	-
2023թ. սեպտեմբեր					
Շինարարական թափոն (ներառյալ ճանապարհաշինարարության համար անպիտան հորատված նյութեր)		88381	560	88941	Տեղափոխվել է աղբավայրեր:
Շինարարության հետ կապված թափոններ	հեռացված	0	0	0	-
	վերաօգտագործված	0	0	0	-
Վտանագավոր (ասֆալտ)	հեռացված	0	0	0	-
	վերաօգտագործված	0	0	0	-
Կուտակային թափոն		88381	560	88941	-
2023թ. հոկտեմբեր					
Շինարարական թափոն (ներառյալ ճանապարհաշինարարության համար անպիտան հորատված նյութեր)		88941	6237	95178	Տեղափոխվել է աղբավայրեր:
Շինարարության հետ կապված թափոններ	հեռացված	0	0	0	-
	վերաօգտագործված	0	0	0	-
Վտանագավոր (ասֆալտ)	հեռացված	0	0	0	-
	վերաօգտագործված	0	0	0	-
Կուտակային թափոն		88941	6237	95178	-
2023թ. նոյեմբեր					
Շինարարական թափոն (ներառյալ ճանապարհաշինարարության		95178	374	95552	Տեղափոխվել է աղբավայրեր:

համար անպիտան հորատված նյութեր)					
Շինարարության հետ կապված թափոններ	հեռացված	0	0	0	-
	վերաօգտագործված	0	0	0	-
Վտանգավոր (ասֆալտ)	հեռացված	0	0	0	-
	վերաօգտագործված	0	0	0	-
Կուտակային թափոն		95178	374	95552	-
2023թ. դեկտեմբեր					
Շինարարական թափոն (ներառյալ ճանապարհաշինարարության համար անպիտան հորատված նյութեր)		95552	6778	95552	Տեղափոխվել է աղբավայրեր:
Շինարարության հետ կապված թափոններ	հեռացված	0	0	0	-
	վերաօգտագործված	0	0	0	-
Վտանգավոր (ասֆալտ)	հեռացված	0	0	0	-
	վերաօգտագործված	0	0	0	-
Կուտակային թափոն		95552	6778	102330	-
Ընդհանուր		85865	16465	102330	Տեղափոխվել է աղբավայրեր:

2. Առաջադրանք 2՝ 34 կմ-ի մնացած ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 37+545-կմ 71+500)

Առաջադրանք 2-ի համար համապատասխան պեղված նյութերը (ժայռեր, քարեր և այլն) կուտակվել են ՃՃ շրջանակներում՝ հետագա օգտագործման համար: Հետևյալ թափոնները առաջացել և կուտակվել են (ՃՃ-ի շրջանակում) հաշվետու ժամանակահատվածի ընթացքում: Շինարարական կարիքների համար անպիտան նյութերից մոտավորապես 970.42 մ³ է առաջացել: Շինարարական թափոնի նվազագույն գումարը առաջացել է հաշվետու ժամանակահատվածում, որը վերաօգտագործվել է աշխատանքների ընթացքում: Վտանգավոր թափոն չի առաջացել:

Կոշտ/կենցաղային աղբ (կույտ) հավաքվել է շինհրապարակում տեղադրված աղբամաններում և Թալին համայնքի կոմունալ ծառայությունը շաբաթական

հիմունքներով տեղափոխում է աղբը շինհրապարակից (Թալին համայնքի հետ պայմանագիրը կներկայացվի հաջորդ հաշվետու ժամանակահատվածում):

Հաշվետու ժամանակահատվածում առաջացած թափոնը ներկայացված է ստորև աղյուսակում՝

Աղբի տեսակ	Առաջացած թափոն (մ ³)			Դիտողություններ
	Նախորդ ընդհանուր	Հաշվետու ժամանակահատված	Նոր ընդհանուր	
2023թ. նոյեմբեր				
Շինարարական թափոն (ներառյալ ճանապարհաշինարարության համար անպիտան հորատված նյութեր)	970.42	970.42	970.42	Տեղափոխվել է աղբավայրեր:
Շինարարության հետ կապված թափոններ	հեռացված	0	0	-
	վերաօգտագործված	0	0	-
Վտանագավոր (ասֆալտ)	հեռացված	0	0	-
	վերաօգտագործված	0	0	-
Կուտակային թափոն	970.42	970.42	970.42	-
2023թ. դեկտեմբեր				
Շինարարական թափոն (ներառյալ ճանապարհաշինարարության համար անպիտան հորատված նյութեր)	970.42	-	970.42	Տեղափոխվել է աղբավայրեր:
Շինարարության հետ կապված թափոններ	հեռացված	0	0	-
	վերաօգտագործված	0	0	-
Վտանագավոր (ասֆալտ)	հեռացված	0	0	-
	վերաօգտագործված	0	0	-
Կուտակային թափոն	970.42	0	970.42	-
Ընդհանուր	970.42	970.42	970.42	Տեղափոխվել է աղբավայրեր:

3.4 Ծառահատման/ծառատնկման գործընթաց

1. Առաջադրանք 1՝ Ազարակ հնագիտական համալիրը շրջանցող 8 կմ ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 29+600-կմ 37+545)

Առաջադրանք 1-ի համար հաշվետու ժամանակահատվածում շինարարությանը խոչընդոտող ծառերը չեն հեռացվել: Կապալառուն ստացել է հրահանգներ Աշտարակ խոշորացված համայնքից առ այն, որ փայտանյութ բաժանի շինհրապարակի տարածքում

գտնվող այն անապահով ընտանիքներին, որոնք ցուցակում են եղել: Հաշվետու ժամանակահատվածում Կապալառուն տեղում հավաքված փայտանյութի մի մասը բաշխել է նշված ընտանիքներին, իսկ մնացած մասը կբաշխվի հաջորդ հաշվետու ժամանակահատվածում: Ի հավելումն, Կապալառուն բանակցել է տարբեր հաստատությունների հետ՝ ապահովելու լավագույն տարբերակը ծառերի և թփերի բույսերի ձեռքբերման, ինչպես նաև ներառելու համապատասխան մասնագետներին վերատնկման աշխատանքների իրականացման մեջ: ԾԿՊ-ն վերջնական փուլում կլինի՝ հիմնված լինելով վերը նշված պայմանների պարզաբանմամբ:

2. Առաջադրանք 2՝ 34 կմ-ի մնացած ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 37+545-կմ 71+500)

Առաջադրանք 2-ի համար, կարևոր է նշել, որ որևէ ծառահատման աշխատանքներ չեն նախատեսվել ծրագրի իրականացման ընթացքում: Անցյալ տարիներին, ծառահատման ամբողջ գործողությունները իրականացվել է նախորդ Կապալառուի կողմից: Ավելին, ծառատնկման գործողությունները կկատարվի, եթե Կապալառուն հեռացնի այն ծառերը, որոնք փոխհատուցվել է ՀՕՏԾ-ի կողմից ծրագրի իրականացման ընթացքում:

3.5 Առողջություն և անվտանգություն

3.5.1 Համայնքի առողջությունն ու անվտանգությունը

Առաջադրանք 1-ի և առաջադրանք 2-ի հաշվետու ժամանակահատվածում որևէ բողոք, կապված համայնքի առողջության և անվտանգության հետ, չի գրանցվել:

Առաջադրանք 1-ի և առաջադրանք 2-ի համար, նախազգուշական և անվտանգության նշաններ տեղադրվել են այն վայրերում, որտեղ աշխատանքները շարունակվում են:

Առաջադրանք 1-ի համար, ծրագրի ցուցանակը կտեղադրվի հաջորդ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում:

Ծրագրի մոտակա բնակավայրերում հանրային իրազեկման ժամանակ տեղեկատվությունը ԲԼՄ-ի վերաբերյալ տրամադրվել է համայնքներին՝ կոնտակտային տվյալների հետ միասին:

3.5.2 Հանրային խորհրդակցություններ և հաղորդակցություն

1. Առաջադրանք 1՝ Ագարակի հնագիտական համալիրը շրջանցող 8 կմ ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 29+600-կմ 37+545)

Առաջադրանք 1-ի համար, նախաշինարարական հանրային իրազեկման հանդիպումը կազմակերպվել և իրականացել է 2023թ. ապրիլի 4-ին Ագարակ, Աղձք և Ուջան համայնքներում: Հանդիպումների ընթացքում հանրությանը, համապատասխան մարմիններին և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվեցին առաջիկա ճանապարհաշինարարական աշխատանքները, շրջակա միջավայրի հետ կապված մտահոգությունները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները:

Աշտարակի խոշորացված համայնքի անդամների, շահագրգիռ կողմերի և լայն հանրության հետ մշտական կապ կպահպանվի ԲԼՄ-ի միջոցով՝ համաձայն ՇՄԱԳ/ՇՄԿՊ-ի: Տուժած բնակչությունը կտեղեկացվի նախապես ցանկացած անհամաձայնությունների մասին, օր.՝ ջրի մատակարարման և էլեկտրականության ընդհատումների և այլնի մասին՝ վահանակների և պաստառների միջոցով:

2. Առաջադրանք 2՝ 34 կմ-ի մնացած ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 37+545-կմ 71+500)

Առաջադրանք 2-ի համար, նախաշինարարական հանրային իրազեկման հանդիպումները կայացել են նոյեմբերի 20-ին, 22-ին և 23-ին Աշտարակի, Շամիրամի և Թայինի համայնքների ագրակիր բնակավայրերում: Մասնագետները ներկայացրել են ծրագրի գլխավոր առանձնահատկությունները՝ շինարարական ամսաթվերը, հնարավոր անհամաձայնությունները, բնապահպանական ռիսկերը, մեղմացուցիչ միջոցառումները, ԲԼՄ-ները: Բողոքների և առաջարկությունների դիմումի ձևը տրամադրվել է բնակավայրի ներկայացուցիչներին և՛ անգլերեն, և՛ հայերեն լեզուներով: Մանրամասները ներկայացված

են Հավելված Բ-ում: Ի հավելումն, պարբերական ոչ պաշտոնական հարցազրույցները անցկացվում են տեղի բնակչության հետ և ԱԵԱ-ների հետ, ովքեր ապրում են ճանապարհի երկայնքով՝ վերլուծելու իրենց հիմնական խնդիրները և անհանգստությունները շինարարական գործընթացի հետ կապված:

3.5.3 Աշխատակիցների անվտանգությունն ու առողջությունը

1. Առաջադրանք 1՝ Ագարակի հնագիտական համալիրը շրջանցող 8 կմ ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 29+600-կմ 37+545)

Առաջադրանք 1-ի համար հաշվետու ժամանակահատվածում, ձեռնարկվել են մի շարք կարևոր գործողություններ՝ ապահովելու անվտանգություն և կանոնակարգերի պահպանում շինարարական ճամբարում՝

- Նախագգուշական նշանները և անվտանգության այլ սարքավորումները տեղադրվել են,
- Ճանապարհային բոլոր շրջված նշանները ետ են դրվել:
- Լիցքավորման կայանում անվտանգության սարքավորումները թարմացվել են:
- Աշխատակիցներին ապահովել են անձնական պաշտպանիչ սարքավորումներով՝ ներառյալ ռեֆլեկտիվ անվտանգության բաճկոններով, անվտանգության կոշիկներով, սաղավարտներով և ձեռնոցներով:
- Աշխատակիցների բժշկական ստուգումները անցկացվել են:
- Կազմակերպել և հետևողական ապահովել են պայթեցման աշխատանքների անվտանգության պահանջները:
- Կորավոր ճանապարհային նշանները փոխարինվել են համապատասխան նշաններով:
- Ճամբարի տարածքում գտնվող անապահով անցուղին ճանաչվել է՝ որպես վտանգավոր, և լայնացվել է անվտանգ աշխատելու և քայլելու համար:
- Կանգառի նշանները տեղադրվել են շինարարակա տարածքից և դաշտային ճանապարհներից մինչև հիմնական ճանապարհ:
- 9% թեքության նշանը տեղադրվել է առկա շրջանցիկ ճանապարհին:
- Բոլոր ճանապարհային նշանները կրկին ստուգվել են և կարգի են բերվել:

- Խողովակների համար նախատեսված 1.5 մ խորությամբ փոսերի եզրերին տեղադրվել են բետոնե բլոկներ, որոնք կապվել են կարմիր և սպիտակ նախազգուշական ժապավենով:
- Նոր ժամանակավոր կանաչապատումը իրականացվել է ճամբարում և մոտակա տարածքներում, որտեղ վտանգավոր տարածքները բացահայտվել են:
- Մետաղական արգելապատնեշը տեղադրվել է վառելիքի բակի տարածքում:
- Շինարարական ճամբարում պահված նյութերը ծածկված էին:
- COVID-19-ի տարածման կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ դասընթացները իրականացվել են բոլոր աշխատակիցների համար:
- Շինարարական ճամբարում պեղվել են նոր մայրեր և տեղադրվել են հետիոտների անվտանգության համար նախազգուշական կարմիր ժապավեններ:
- Բարձրության վրա աշխատակիցների համար անվտանգության կարգավորումների ներմուծումը ներկայացվել են:
- Ճանապարհային մետաղական լույսի անդրադարձիչները մաքրվել են փոշուց:

Ի հավելումն, աշխատակիցների և կազմակերպության բժշկական ստուգումները և պայթեցման գործողությունների անվտանգության պահանջների հետևելը իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում: Բոլոր շրջված և բացակայող ճանապարհային նշանները ուղղվել են, վերանորոգվել և, ըստ պատշաճի, կարգավորվել:

Տվյալ չափումները ամբողջությամբ նպաստում են՝ պահպանելու անվտանգ և ապահով աշխատանքային միջավայր՝ կարևորելով աշխատակիցների բարեկեցությունը և համապատասխանությունը անվտանգության կանոններին և չափանիշներին:

2. Առաջադրանք 2՝ 34 կմ-ի մնացած ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 37+545-կմ 71+500)

Հաշվետու ժամանակահատվածում իրականացել են հետևյալ գործողությունները՝

- Ճանապարհային նոր նշանները տեղադրվել են:

- Աշխատակիցներին ապահովել են անձնական պաշտպանիչ սարքավորումներով՝ ներառյալ ռեֆլեկտիվ անվտանգության բաճկոններով, անվտանգության բաճկոններով, սաղավարտներով և ձեռնոցներով:
- Շինարարական ճամբարում պահպանված նյութերը ծածկված էին:
- Կազմակերպել և հետևողական իրականացվել են պայթեցման աշխատանքների անվտանգության պահանջները՝ պայթեցման աշխատանքների ընթացքում:
- Ի հավելումն, շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության վերապատրաստման դասընթացի կազմակերպումը ամբողջ անձնակազմի համար էր իրականացվել:

3.6 Վերապատրաստման դասընթաց

1. Առաջադրանք 1՝ Ագարակի հնագիտական համալիրը շրջանցող 8 կմ ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 29+600-կմ 37+545)

2023թ. օգոստոսի 18-ին Կապալառուն, ի պատասխան Գործատուի ԲԱ-ի կողմից խնդրանքին, կազմակերպել և իրականացրել է վերապատրաստման դասընթաց՝ ինչպես վարվեն աշխատակիցները շինարարական ճամբարում, երբ օձերի հետ կապված իրավիճակներ են լինում: Մասնակիցները սովորել են օձի խայթոցների պատշաճ ճանաչման, անհապաղ առաջին օգնության միջոցառումների և բժշկական օգնության անհապաղ դիմելու կարևորության վերաբերյալ: Բուժաշխատողները ևս մասնակցել են վերապատրաստման դասընթացին:

2023թ. օգոստոսի 30-ին անցկացվել է առաջին օգնության և արտակարգ իրավիճակների վերապատրաստում Կապալառուի աշխատակիցների համար ԱՄԱ-ի և բուժաշխատակիցների կողմից: Տվյալ վերապատրաստումը վերաբերում էր նաև Covid-19-ին և այլ վարակներին, ինչպես Գործատուն էր ցանկացել: Մասնակիցները սովորեցին վարակների (COVID-19, գրիպ) վտանգների և անհապաղ բժշկական օգնություն փնտրելու կարևորության մասին:

Ցուրտ եղանակի և եղանակային փոփոխությունների վերաբերյալ վերապատրաստման դասընթացը տեղի է ունեցել 2023թ. նոյեմբերի 19-ին համատեղ կերպով Կապալառուի

ԲՄԱ-ի, ԱՄԱ-ի և բուժաշխտողների հետ: Դասընթացի ընթացքում, աշխատակիցները սովորել են, թե ինչպես պաշտպանեն իրենք իրենց ցուրտ եղանակին, ինչպես աշխատեն դրսում և, հետևելով Գործատուի խնդրանքից, այն ընդգրկում է ցրտահարության հետ կապված իրավիճակներ, հատկապես՝

- նշաններ և ցրտահարության նշաններ և ախտանիշներ,
- առաջին օգնության գործընթացներ:

2. Առաջադրանք 2՝ 34 կմ-ի մնացած ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 37+545-կմ 71+500)

Շրջակա միջավայրի, առողջության, անվտանգության և հնազիտական վերապատրաստումը կազմակերպվել է 2023թ. դեկտեմբերի 21-ին Կապալառուի շինարարական ճամբարում:

Վերապատրաստման ընթացքում, աշխատակիցները տեղեկացել են հետևյալի մասին՝

- ԲԱևՄ և շրջակա միջավայրի պաշտպանության ընդհանուր սկզբունքներ,
- վտանգներ, որոնք կարող են պատահել ծրագրի իրականացման ընթացքում,
- համապատասխան միջոցառումներ, որոնք կարող են օգնել՝ կանխարգելելու վտանգները և վտանգավոր իրավիճակները,
- առաջին օգնության պարագաների և կրակմարիչների առկայության կարևորությունը շինարարական տեղամասերում,
- COVID-19-ի կանխարգելման միջոցառումներ,
- աշխատել ցուրտ եղանակային պայմաններում,
- շտապ բժշկական օգնության կազմակերպում՝ օձի կամ կարիճի խայթելու դեպքում:

Ի հավելումն, հնագիտական հետազոտությունների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը և հնարավորություն գտնելու ընթացակարգը ներկայացվել է մասնակիցներին Կապալառուի հնագետների կողմից:

4 ՏՇՄԿՊ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

4.1 ՏՇՄԿՊ վերանայում

1. Առաջադրանք 1՝ Ագարակի հնագիտական համալիրը շրջանցող 8 կմ ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 29+600-կմ 37+545)

Առաջադրանք 1-ի համար ՏՇՄԿՊ-ն հաստատվել է 2023թ. ապրիլի 24-ին այն պայմանով, որ Հավելված 3-ը՝ Ծառերի կառավարման պլանը, կթարմացվի: Վերջերս, Կապալառուն բանակցել է տարբեր հաստատությունների հետ՝ ապահովելու համար լավագույն տարբերակը ձեռք բերելու համար ծառերի և թփերի բույսերը, ինչպես նաև ներառելու համապատասխան մասնագետներին՝ վերատնկման գործողությունների իրականացման համար: ԾԿՊ-ն վերջնական փուլում կլինի՝ հիմնվելով վերը նշված պայմանների պարզաբանման վրա:

2. Առաջադրանք 2՝ 34 կմ-ի մնացած ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 37+545-կմ 71+500)

Առաջադրանք 2-ի համար, ՏՇՄԿՊ-ն հաստատվել է պայմաններով 2023թ. դեկտեմբերի 18-ին: Ի հավելումն, ԱԶԲ-ի հետևյալ հրահանգները և հաշվի առնելով նախագծի խաչմերուկները, ինչպիսիք են՝ Նոր Եղեսիա խաչմերուկը և դաշտամիջյան ճանապարհները, Գործատուն պահանջել է Ինժեներից և Կապալառուից պատշաճ ուսումնասիրության միասնական զեկույց: Վերջերս, հաշվետվության հնագիտական մասը շարունակական փուլում է. արդյունքները կտրամադրվեն հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:

5 ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊՐԱԿՏԻԿԱ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

5.1 Արդյունավետ պրակտիկա

Առաջադրանք 1-ի համար, հաշվետու ժամանակահատվածի համար՝ որպես արդյունավետ պրակտիկա, մենք կարող ենք նշել այն որոշումը, որ նախագծի իրականացման ընթացքում կտրվող ծառերը օգտագործվեն՝ որպես վառելափայտ, և տրամադրվեն Աշտարակ խոշորացված համայնքի աղքատ ընտանիքներին:

Առաջադրանք 2-ի համար, հաշվետու ժամանակահատվածում, որևէ գործ կապված արդյունավետ պրակտիկայի հետ չի արձանագրվել:

5.2 Բարելավման հնարավորություններ

Ծրագրի իրականացման սույն ժամանակահատվածում բարելավման հնարավորություններ արձանագրված չեն:

6 ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

6.1 Բողոքներ

1. Առաջադրանք 1՝ Ագարակի հնագիտական համալիրը շրջանցող 8 կմ ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 29+600-կմ 37+545)

Նախորդ հաշվետու ժամանակահատվածում տեղի բնակիչներից մեկի բողոքը ուղղված Կապալառուին արձանագրվել է: Տեղի բնակիչ պրն. Արման Ավդալյանը բողոք է ներկայացրել գլխավոր ճանապարհի 35+650 կմ-ի մոտակայքում շինարարական աշխատանքների սկսվելուց հետո իր մասնավոր սեփականության ոռոգման ջրի հասանելիության վերաբերյալ: Կապալառուն տեղեկացրել է ԱԵԱ-ին, որ շինարարական գործողությունները իրականացել են տրամադրած նախագծի հիման վրա, և ըստ, որի կոմունալ ծառայությունների տեղափոխումը տվյալ կետում չի տրամադրվել նախագծով: Միննույն ժամանակ, տուժած անձին տեղեկացվել է, որ նա կարող է քննարկել տվյալ խնդիրը տեղի ջրօգտագործողի մեղադրողի հետ, քանի որ հարցի կարգավորումը նրանց իրավասության շրջանակներում է: Հանդիպումը տեղի է ունեցել Կապալառուի ճամբարում հաշվետու ժամանակահատվածում, երբ պրն. Մր. Ավդալյանը բացատրեց իր հիմնական նպատակը՝ վերափոխելու ոռոգման համակարգը: Նա նշեց, որ բավարարություն կստանա, եթե ծրագրի կողմերը համաձայնեն աջակցելու նրան, որպեսզի ձեռք բերի թույլտվություն «ԱՐԱԳԱԾՈՏՆ» ջրային կոմիտեից՝ իր այգու ամենամոտ առկա կետից ոռոգման ջրի տրամադրման հետ կապված: Գործատուի ներկայացուցիչները համաձայնել են՝ նախաձեռնելու նշված թույլտվության ձեռք բերման գործընթացը: Երբ ձեռք բերվի, Կապալառուն կապահովի տեխնիկական օգնություն տուժած անձին՝ ամենամոտ ջրի աղբյուրից իր այգու տանող խողովակաշարը կառուցելիս:

Օգոստոսի 11-ին՝ հաշվետու ժամանակահատվածում, Կապալառուն ստացել է բողոքներ Ուջան համայնքի բնակիչների կողմից՝ այգիների մշակաբույսերի վնասման հետ կապված 37+000 կմ-ի տարածքում: Այգիների սեփականատերերի կողմից արձանագրվել են 9 բողոքներ: Նշված հատվածում ճանապարհի թեքությունը ավելի բարձր է, քան հողի մակարդակը և, հաշվի առնելով, այն փաստը, որ այգիները տեղակայված են ճանապարհին շատ մոտ, հնարավոր չէ ամբողջությամբ հրաժարվել փոշու ազդեցությունից

շինարարության ընթացքում: Լուծման տարբերակները քննարկվել են հաշվետու ժամանակահատվածում Ինժեների և Գործատուի ներկայացուցիչների հետ: Նշված խնդիրների կանոնակարգման հետ կապված հետագա քայլերը կներկայացվի հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:

2. Առաջադրանք 2՝ 34 կմ-ի մնացած ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ37+545-կմ 71+500)

Առաջադրանք 2-ի համար, որևէ բողոք արձանագրված չէ: Ի հավելումն, շինարարությունից առաջ հանրային իրազեկման հանդիպումները տեղի են ունեցել նոյեմբերի 20-ին, 22-ին և 23-ին Աշտարակ, Շամիրամ և Թալին համայնքների ազդակիր բնակավայրերում: Ծրագրի գլխավոր առանձնահատկությունները՝ շինարարության ամսաթվերը, հնարավոր անհամաձայնությունները, բնապահպանական վտանգները և մեղմացուցիչ միջոցառումները, ինչպես նաև բողոքների լուծման մեխանիզմը ներկայացված են:

7 ՀՆԱԳԻՏԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՖԻԶԻԿԱԿԱՆ/ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

1. Առաջադրանք 1՝ Ազարակ հնագիտական համալիրը շրջանցող 8 կմ ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 29+600-կմ 37+545)

Առաջադրանք 1-ի համար հաշվետու ժամանակահատվածում անցկացվել են հնագիտական խնդիրների հետ կապված հետևյալ գործողությունները՝

- Պարբերական դիտարկումները կայացել են ամբողջ հատվածով, հատկապես «Ազարակ» պատմամշակութային արգելոցի տարածքում:
- Կապալառուն պահպանում է ՃՃ-ի նեղ սահմանները և հետևում է ամբողջ հանձնարարականի համար հնարավորություն գտնելու ընթացակարգին:
- Համառոտ տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ԿԳՄՄՆ) շարունակվող գործողությունների վերաբերյալ:
- ՀՀ ԳԱԱ ՊՈԱԿ-ի Հնագիտության և ազգագրության ինստիտուտը վերջնաժամկետի շրջանակում ավարտել է հնագիտական աշխատանքների հանույթը Ազարակի պատմամշակութային արգելոցի տարածքում, որը տեղակայված է կմ 32.700 – կմ 33.600-ում, և ներկայացրել է նախնական հաշվետվություն արդյունքների վերաբերյալ (տես Հավելված Գ-ում):
- Պեղումների ընթացքը, բաց շերտերը, հետախուզական փոսերը և հայտնաբերված նյութերը լուսանկարվել է: Ընդհանուր 500 լուսանկարներ են արվել: Պեղումների վայրը լուսանկարվեց և տեսագրվեց մանրամասնորեն 3 անգամ՝ նախքան աշխատանքի սկսվելը, պեղումների ընթացքում և աշխատանքի ավարտումից հետո օգտագործվել է դրոն:
- Պեղման ենթակա ամբողջ տարածքի վերաբերյալ քաղվածքը պատրաստ է: Բոլոր չբացահայտված կառույցները, դամբարաններն ու հետախուզական փոսերը չափվել են և տեղադրվել տարածքում:

- Բոլոր բացահայտված նյութերը տեղափոխվել են ՀՀ ԳԱԱ ՊՈԱԿ-ի Հնագիտության և ազգագրության ինստիտուտ: Վերջերս, նրանք մաքրման և վերականգնման փուլում են: Մարդաբանական և ազգագրական նյութերը հանձնվել են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մարդաբանական խմբին և ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտի պալեոզոոլոգիական խմբին ուսումնասիրության և նկարագրության համար:

2. Առաջադրանք 2՝ 34 կմ-ի մնացած ճանապարհահատվածը (Մ-1 ճանապարհ կմ 37+545-կմ 71+500)

Առաջադրանք 2-ի համար, ԱԶԲ-ի հրահանգներից և նախագծի փոփոխություններից հետո (Նոր Եղեւիայի խաչմերուկ և դաշտամիջյան ճանապարհներ), Գործատուն Ինժեներից և Կապալառուից պահանջել է պատշաճ ուսումնասիրության զեկույց: Նշված հաշվետվությունը կներառի հնագիտական հետազոտություն և կներկայացնի առաջիկա գործողությունները:

Հնագիտական խնդիր առաջացել է 59+100կմ-ի ճանապարհահատվածում՝ Ներքին Սասնաշենի հնագիտական համալիրին կից, որտեղ կար ժայռերի լցվածության կուտակում: Երբ եղանակային պայմանները ավելի բարենպաստ են լինում, հատկապես, երբ հողը չոր է, Կապալառուն պետք է ձեռնարկի գործողություններ, լուծելու տվյալ խնդիրը՝ Ինժեների և Կապալառուի հնագետների մասնակցությամբ:

8 ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1 Ամփոփում

1. Առաջադրանք 1՝ Ազարակ հնագիտական համայիրը շրջանցող 8 կմ ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ 29+600-կմ 37+545)

ՇՄԿՊ-ի հաստատումը տրամադրվել է ինժեների կողմից 2023թ. ապրիլի 24-ին, այն պայմանով, որ Հավելված 3-ը՝ Ծառերի կառավարման պլանը, թարմացվի: Կապալառուն տեղեկացրել է, որ ծառերի կառավարման պլանը վերջերս գտնվում է ավարտման փուլում, քանի որ Կապալառուն բանակցում է տարբեր հաստատությունների հետ՝ ապահովելու լավագույն տարբերակները ձեռք բերելու համար ծառեր և թփային բույսեր: Ի հավելումն, համապատասխան մասնագետները ներգրավված կլինեն վերատնկման աշխատանքների իրականացման մեջ:

Կապալառուի շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության փորձագետները Ինժեների՝ ԲԱԱ-ի և Գործատուի ԲԱ-ի հետ միասին անցկացրել են մոնիթորինգի այցելություն ծրագրի շինարարական տեղամասեր՝ կարգավորելու ՇՄԱԳ/ՇՄԿՊ-ում նշված բոլոր մեղմացուցիչ միջոցառումների իրականացումը:

Փոշու, աղմուկի և վիբրացիայի հիմնական և պարբերական գործիքային չափումները իրականացել են ծրագրի համար: Տվյալ չափումների նպատակն է հավաքել հիմնական տվյալներ աղմուկի և վիբրացիայի մակարդակների վերաբերյալ, ինչպես նաև փոշու կոնցենտրացիաների զգայուն կետերում: Տվյալ չափումները առօրյա գործառնական մոնիթորինգի գործընթացի մասն էին կազմում՝ գնահատելու և մեղմացնելու տվյալ գործոնների հետ կապված հնարավոր ազդեցությունները: Փոշու, աղմուկի և վիբրացիայի պարբերական չափումները անցկացվել են հետևյալ կետերում՝ N2, N3 և N5 կետերում հուլիսին, N2, N3 և N5 կետերում օգոստոսին, N2, N3 և N5 կետերում սեպտեմբերին, N3, N4 և N5 կետերում հոկտեմբերին, N2, N3 և N5 կետերում նոյեմբերին և N5 կետում դեկտեմբերին:

Բոլոր կետերում ցերեկային տարբեր ժամանակահատվածներում փոշու մոլեկուլների իրական կոնցենտրացիաները չեն գերազանցել առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները: Այնուամենայնիվ, փոշու մոլեկուլների հիմնական իրական

կոնցենտրացիաները գերազանցել են օրական միջին առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները և՛ ազգային, և՛ ՄՖԿ չափանիշների համար: Բացի դա, նշված կետերի չափման արդյունքները մեծապես ավելի բարձր էին, քան հիմնական արժեքները, բայց դեռ չեն գերազանցել առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները:

Ցերեկային տարբեր ժամանակահատվածներում անցկացված ադուկի մակարդակի չափումները ցույց են տվել, որ բոլոր կետերում, առավելագույն ադուկի մակարդակները գտնվել են սանիտարական նորմերով սահմանված սահմանափակ արժեքի շեմերում: Այնուամենայնիվ, որոշ կետերում (N2, N4 և N5), համարժեք ադուկի մակարդակները կա՛մ գերազանցել են, կա՛մ մոտ են եղել գերազանցելու սանիտարական նորմերը: Հատկանշական է, որ ադուկի մակարդակները տվյալ կետերում մեծապես ազդվել են Երևան-Գյումրի մայրուղու ինտենսիվ երթևեկությունից, քանի որ այդ կետերը տեղակայված են մոտակայքում:

Վիբրացիայի չափումների արդյունքները գտնվում են սանիտարական նորմերով սահմանված թույլատրելի մակարդակներում: Հաշվետու ժամանակահատվածում բուսահող չի առաջացել: Մեկնարկի ամսաթվից սկսած՝ հորատված բուսահողի ընդհանուր ծավալը 98000 մ3 է: Վերին շերտի բուսահողը տեղափոխվել է հաստատված աղբավայրեր Ագարակ 1-ում և Ագարակ 3-ում:

Հաշվետու ժամանակահատվածում շինարարական կարիքների համար անպիտան 16 465մ3 նյութ է առաջացել: Շինարարական կարիքների համար անպիտան նյութերը տեղափոխվել են Ագարակ 2-ի և Ագարակ 4-ի աղբավայրեր:

Հաշվետու ժամանակահատվածում Կապալառուն ստացել է բողոքներ Ուջան համայնքի բնակիչների կողմից՝ կապված այգիների մշակաբույսերի վնասման հետ 37+000 կմ-ի մոտակայքում: Լուծման տարբերակները քննարկվել են հաշվետու ժամանակահատվածում Ինժեների և Գործատուի ներկայացուցիչների հետ:

Առաջիկա քայլերի հետ կապված նշված խնդիրների կանոնակարգումը կներկայացվի հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում, Կապալառուն կազմակերպել է համապարփակ վերապատրաստման դասընթացներ օգոստոսի 18-ին, 30-ին և նոյեմբերի 19-ին: Հիմնական թեմաներն են՝

- օձերի հետ կապված իրավիճակներ,
- COVID-19 և վիրուսներ,
- եղանակային փոփոխություններ, ցրտահարության հետ կապված իրավիճակներ:

ՀՀ ԳԱԱ ՊՈԱԿ-ի Հնագիտության և ազգագրության ինստիտուտը ավարտել է հնագիտական աշխատանքների հանույթը Ագարակի պատմական և մշակութային համալիրի տարածքում՝ տեղակայված կմ 32.700 – կմ 33.600-ում և ներկայացվել է նախնական հաշվետվություն: Բոլոր բացահայտված նյութերը տեղափոխվել են ՀՀ ԳԱԱ ՊՈԱԿ-ի Հնագիտության և ազգագրության ինստիտուտ:

Ընդհանուր առմամբ, այն բոլոր խնդիրներ և հրահանգները, որոնք հասցեագրվել են Կապալառուին և Ինժեներին, արագ կերպով լուծվել են: Սա ցույց է տալիս նրանց նվիրվածությունը շրջակա միջավայրի պաշտպանությանը և առողջության ու անվտանգության նկատառումները առաջնահերթ համարելուն ողջ ծրագրի ընթացքում:

2. Առաջադրանք 2՝ 34 կմ-ի մնացած ճանապարհահատված (Մ-1 ճանապարհ կմ37+545-կմ 71+500)

Առաջադրանք 2-ի համար, ՏՇՄԿՊ-ը հաստատվել է պայմաններով 2023թ. դեկտեմբերի 18-ին: Մինևույն ժամանակ, Ինժեներից և Կապալառուից պահանջել են պատրաստել պատշաճ ուսումնասիրության զեկույց ծրագրում նախագծային փոփոխությունների համար: Ներկայումս, հաշվետվությունը ավարտման փուլում է:

Կապալառուի շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության փորձագետները ինժեների շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության, ինչպես նաև Գործատուի շրջակա միջավայրի և անվտանգության մասնագետների հետ անցկացրել են մոնիթորինգային այցելություններ ծրագրի շինարարական տարածքներ՝ վերահսկելու ՇՄԱԳ/ՇՄԿՊ-ում նշված բոլոր մեղմացուցիչ միջոցառումների իրականացումը:

Փոշու, աղմուկի և վիբրացիայի հիմնական և պարբերական գործիքային չափումները իրականացվել են ծրագրի համար: Տվյալ չափումների նպատակը եղել է հավաքել հիմնական տվյալներ աղմուկի և վիբրացիայի մակարդակների վերաբերյալ, ինչպես նաև փոշու կոնցենտրացիայի զգայուն կետերում: Տվյալ չափումները առօրյա

գործիքային չափումների գործընթացի մասն էին կազմում՝ գնահատելու և մեղմացնելու հնարավոր ազդեցությունները կապված տվյալ գործոնների հետ: Փոշու, աղմուկի և վիբրացիայի պարբերական չափումները կատարվել են հետևյալ կերպ՝ N8 և N9 կետերում նոյեմբերին և N8 կետում դեկտեմբերին:

Չափման կետերում փոշու մոլեկուլների կոնցենտրացիաները մնացել են թույլատրելի սահմաններում, PM10 կոնցենտրացիաներով աննշան կերպով ավելի բարձր են, քան հիմնական արժեքները նոյեմբերին: Կապալառուին հրահանգվել է լուծել խնդիրը և զեկուցել: Այնուամենայնիվ, դեկտեմբերից փոշու կոնցենտրացիաները՝ ներառյալ PM2.5-ը և PM10-ը, ավելի քիչ էին, քան հիմնական արժեքները՝ կապված եղանակային բարենպաստ պայմանների հետ:

Ցերեկային տարբեր ժամանակահատվածների ընթացքում տարբեր կետերում անցկացվել են աղմուկի մակարդակի չափումները: Կետ N8-ում աղմուկի համարժեք մակարդակները գտնվել են սահմանափակ արժեքի սահմաններից ցածր՝ ապահովելով սանիտարական նորմերի համապատասխանությունը: Այնուամենայնիվ, Կետ N9-ը տեղակայված է անմիջապես Մ1 մայրուղու մոտ, աղմուկի համարժեք մակարդակները գերազանցել են սահմանափակ արժեքի շեմերը ինտենսիվ երթևեկության պատճառով: Չնայած դրան, աղմուկի առավելագույն մակարդակները բոլոր կետերում գտնվել են սանիտարական նորմերով սահմանված թույլատրելի սահմաններում: Վիբրացիայի չափումների արդյունքները գտնվում են սանիտարական նորմերով սահմանված թույլատրելի մակարդակներում:

Հաշվետու ժամանակահատվածում բուսահող չի առաջացել: Ծառահատման ամբողջ գործողությունները իրականացվել են նախկին Կապալառուի կողմից և ծրագրի իրականացման ընթացքում ծառահատման որևէ գործողություններ չեն նախատեսվել:

Հաշվետու ժամանակահատվածում շինարարական կարիքների համար անպիտան 970.42մ3 նյութ է առաջացել:

Նախաշինարարական հանրային իրազեկման հանդիպումները տեղի են ունեցել Աշտարակ, Շամիրամ և Թալին համայնքների ազգակիր բնակավայրերում նոյեմբերի 20-ին, 22-ին և 23-ին:

Հանդիպումները ներառել են ծրագրի գլխավոր առանձնահատկությունները՝ շինարարության ամսաթվերը, հնարավոր անհամաձայնությունները, բնապահպանական վտանգները և մեղմացուցիչ միջոցառումները, ինչպես նաև բողոքների լուծման մեխանիզմը: Որևէ բողոքներ չեն արձանագրվել հաշվետու ժամանակահատվածում:

Բնապահպանական, առողջության, անվտանգության և հնագիտության վերապատրաստման դասընթացները կազմակերպվել է 2023թ. դեկտեմբերի 21-ին Կապալառուի շինարարական ճամբարում: Դասընթացի ընթացքում աշխատակիցները տեղեկացել են ԲԱևՍ պաշտպանության ընդհանուր սկզբունքների, COVID-19-ի կանխարգելման միջոցառումների, ցուրտ եղանակին աշխատելու ընթացակարգերի, ինչպես նաև այն մասին, թե ինչպես կարգավորել այն իրավիճակները, երբ օձը կամ կարիճը խայթի: Ի հավելումն, Կապալառուի հնագետը ներկայացրել է հնագիտական հետազոտությունների և հնարավորություն գտնելու կարգի վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, այն բոլոր խնդիրները և հրահանգները, որոնք հասցեագրվել են Կապալառուին և Ինժեներին արագ կերպով լուծվել են: Սա ցույց է տալիս նրանց նվիրվածությունը շրջակա միջավայրի պաշտպանությանը և առողջության ու անվտանգության նկատառումները առաջնահերթ համարելուն ողջ ծրագրի ընթացքում:

8.2 Առաջարկություններ

Ծրագրի իրականացման տվյալ փուլի ընթացքում մենք չունենք որևէ առաջարկություն:

9 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ 2024Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ

9.1 ՃԴ-ի և ինժեների համար

1. Բնապահպանական, ԱևԱ և հնագիտական միջոցառումների ընդհանուր կառավարում,
2. Կապալառուի ամսական հաշվետվությունների վերանայում և հաստատում,
3. Բնապահպանական անվտանգության վերաբերյալ ամսական հաշվետվություն,
4. Առօրյա գործիքային մոնիթորինգի վերահսկում՝ փոշի, աղմուկ և վիբրացիա,
5. Բնապահպանության, առողջության, անվտանգության և սոցիալական խնդիրների վերաբերյալ խորհրդատվություն ինժեներին և կապալառուին, եթե անհրաժեշտ է,
6. ԲԱևՍ չլուծված խնդիրների հետևում,
7. Մասնակցություն ԱԶԲ առաքելության այցելություններին,
8. Հետևել թարմացված ՏՇՄԿՊ-ի ներկայացմանը,
9. **Առաջադրանք 2-ի** համար, հետևել պատշաճ ուսումնասիրության հաշվետվության ներկայացմանը:

9.2 Կապալառուի համար

1. Բնապահպանական անվտանգության վերաբերյալ ամսական հաշվետվություն,
2. Գործիքային մոնիթորինգ՝ փոշի, աղմուկ և վիբրացիա,

3. Շրջակա միջավայրի, առողջական, սոցիալական, անվտանգության և հնագիտական խնդիրների մեղմացման միջոցառումների իրականացում շինարարական գործունեությունների ընթացքում,
4. ԱԶԲ առաքելության, ՃԴ-ի և Ինժեների տեղամասային այցելությունների մասնակցություն
5. ՏՇՄԿՊ-ի թարմացված տարբերակի ընդունում՝ ներառյալ Ծառերի կառավարման պլանը,
6. Առողջության և անվտանգության հետ կապված հարցերի վերաբերյալ ուսումնական դասընթացի իրականացում:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա՝ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ (ՊԱՀՊԱՆՄԱՆ) ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԼՈՒՍԱՆՔԱՐՆԵՐԸ

Նկար 1 և 2: Առաջադրանք 1, Պարբերական գործիքային չափումներ



**Նկար 3. Առաջադրանք 1, 2023թ. օգոստոսի 28-ին կատարված տեղամասի
մոնիթորինգային այցելություն**



Նկար 4. Առաջադրանք 1, ջրցան մեքենա





Նկար 5, 6 և 7. Առաջադրանք 1, շինարարության գործընթաց



